Գ Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ի Հ Ր Ա Վ Ե Ր

ՈՉ ԽՈՐՀՐԴԱՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՄԲ ԳՆՈՒՄ

Ծրագրի անվանումը՝	**Հանրային իրազեկման քարոզարշավի նյութերի պատրաստում**
Վճարման աղբյուրը՝	**«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային ծրագիր, կրեդիտ #5222-ԱՄ; և թիվ 014138 դրմաշնորհ**
Պայմանագիր No.	**CR4/B-G/SH/024-18**
Ամսաթիվը՝	**20 դեկտեմբերի, 2018թ.**

Հարգելի գործընկեր,

1. Հրավիրում ենք ներկայացնելու Ձեր Գնառաջարկը **«Հանրային իրազեկման քարոզարշավի նյութերի պատրաստում»** ոչ խորհրդատվական ծառայությունների (այսուհետ՝ Ծառայությունների) մատուցման նպատակով:

   Տեխնիկական մասնագրերի և պահանջվող քանակների վերաբերյալ տեղեկատվությունը կցվում է (Աշխատանքների ընդհանուր նկարագիր բաժնում):

2. Դուք պետք է գնառաջարկ ներկայացնեք սույն հրավերի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ բաժնում նշված բոլոր ծառայությունների անվանումների համար: Գնային առաջարկները կգնահատվեն բոլոր անվանումների համար միասին և պայմանագիր կկնքվի այն ընկերության հետ, որի բոլոր անվանումների համար առաջարկած, գնահատված ընդհանուր գինը կլինի նվազագույնը:
3. Ձեր Գնառաջարկը պետք է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով:
4. Պատվիրատուին Ձեր առաջարկը՝ 3-րդ կետում նշված համակարգի միջոցով, ներկայացման վերջնաժամկետն է **08 Հունվարի, 2019թ., ժ. 15:00 (տեղական ժամանակով):** Հայտը ներկայացնելիս առաջնորդվել www.armeps.am կայքի տեղադրված ժամացույցով: Համակարգի կողմից չեն ընդունվում վերջնաժամկետից ուշ ներկայացված հայտերը:

5. Ձեր առաջարկը՝ հայերեն լեզվով պետք է ներկայացվի համապատասխան տեխնիկական փաստաթղթերի, կատալոգ(ներ)ի և տպագիր այլ նյութերի ու համապատասխան տեղեկությունների հետ մեկտեղ՝ գնանշված յուրաքանչյուր անվանման համար՝ ներառելով կազմակերպությունների անվանումները և հասցեները, որոնք ապահովում են սպասարկման ծառայություններ Հայաստանում: **Չի կիրառվում (Չ/Կ)**
6. Ձեր առաջարկը պետք է ներկայացվի ստորև բերված հրահանգների և կից ներկայացվող Պայմանագրի համաձայն: Կցված Ծառայությունների մատուցման ժամկետները և պայմանները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

(i) <u>ԳՆԵՐ</u>- Գները պետք է ներկայացվեն Հայկական Դրամով՝ ընդհանուր արժեքի համար, որը ներառում է բոլոր հարկերը՝ ԱԱՀ, մաքսատուրքերը, տուրքերը, ինչպես նաև ծառայությունների մատուցման հետ կապված բոլոր ծախսերը:

(ii) <u>ԳՆԱՆՇՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ-</u> Տեխնիկական մասնագրերին էականորեն համապատասխանող առաջարկները կգնահատվեն ընդհանուր գնի համեմատման սկզբունքով:
Առաջարկները գնահատելիս Պատվիրատուն յուրաքանչյուր առաջարկի գնահատված գինը կորոշվի գնառաջարկի թվաբանական ցանկացած անճշտությունների ուղղումների միջոցով, հետևյալ կերպ.

ա) այնտեղ, որտեղ կա անհամապատասխանություն բառերով և թվերով տրված գումարների միջև, կգերակայի բառերով գրվածը,
բ) այնտեղ, որտեղ կա անհամապատասխանություն միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքով ստացված ընդամենի միջև, կգերակայի նշված միավորի արժեքը,
գ) եթե Ծառայություններ մատուցողը հրաժարվի ընդունել ուղղումները, նրա առաջարկը կմերժվի:

<u>Որակավորմանն ուղղված պահանջներ.</u>

Ամենացածր գնահատված հայտը որոշելուց հետո Գնորդը պետք է իրականացնի Հայտատուի հետորակավորման գնահատումը կիրառելով ստորև սահմանված պահանջները: Այլ պահանջներ չպետք է կիրառվեն Հայտատուի հետորակավորման գնահատման ժամանակ:

<u>(ա) Նմանատիպ պայմանագրերի փորձառություն</u>
Մատակարարը պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն (պայմանագրի պատճեն) առ այն, որ ունի նմանատիպ ոչ խորհրդատվական ծառայությունների հաջողությամբ ավարտված նվազագույնը երկու (2) պայմանագիր ***(Սոցիալակ***

ուղղվածության՝ հանրային իրազեկման տեղեկատվական նյութերի մշակում) վերջին երեք (3) տարիների (2016-2018թթ.) ընթացքում:
ՀԳ դեպքում, յուրաքանչյուր ՀԳ անդամ պետք է ապահովի փորձառության նվազագույն պահանջը:

(iii) <u>ԳՆՄԱՆ ՊԱՏՎԵՐԻ/ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՆՈՐՀՈՒՄ-</u> Պայմանագիրը կշնորհվի այն առաջարկ ներկայացնողին, որը կառաջարկի գնահատված նվազագույն գինը և կբավարարի տեխնիկական պահանջներին: Հաղթող ճանաչված առաջարկ ներկայացնողը կստորագրի կից ձևով Պայմանագիրը, ինչպես նաև ծառայությունների մատուցման ժամկետները և պայմանները:

(iv) <u>ԱՌԱՋԱՐԿԻ ՈՒԺԻ ՄԵՋ ԼԻՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏ-</u> Ձեր առաջարկը պետք է ուժի մեջ լինի Գնառաջարկի Հրավերի 4-րդ կետում նշված առաջարկի ներկայացման վերջնաժամկետից հետո քառասունհինգ (45) օր ժամկետով:

7. Հետագա տեղեկատվություն.

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն երեք օրացուցային օր առաջ էլեկտրոնային Armeps Համակարգի միջոցով պահանջելու հրավերի վերաբերյալ տեղեկատվություն/պարզաբանում:

8. Ստուգումներ և աուդիտ

8.1 Ծառայություններ մատուցողը պետք է ապահովի Պատվիրատուի բոլոր ցուցումների կատարումը, որոնք կհամապատասխանեն ծառայությունների մատուցման վայրի գործող օրենքներին:

8.2 Ծառայություններ մատուցողը պետք է թույլատրի և պետք է այնպես անի, որպեսզի վերջինիս Ենթակապալառուները և խորհրդատուները թույլատրեն Բանկին և/կամ Բանկի կողմից նշանակված անձանց ստուգել Պայմանագրի իրականացման և Գնանշման ներկայացման հետ կապված Ծառայություններ մատուցողի գրասենյակները և բոլոր հաշիվները և գրառումները Բանկի կողմից նման պահանջ լինելու դեպքում: Ծառայություններ մատուցողի և վերջինիս Ենթակապալառուների և Խորհրդատուի ուշադրությունը հրավիրվում է Կետ 5-ին՝ Պայմանագրի Խարդախության և կոռուպցիայի ձևին, որը ի լրումն այլ բաների, տրամադրում է այն գործողությունները, որոնք նպատակ ունեն սկզբունքորեն խոչընդոտելու Բանկի ստուգման և աուդիտի իրավունքների իրանացմանը և որոնք փոխարինում են արգելված միջոցառման, որը հանգեցնում է պայմանագրի դադարեցման (ինչպես նաև Բանկի գերակայող կանխարգելիչ ընթացակարգերի համաձայն՝ անհամապատասխանության որոշելուն):

Հարգանքով՝

Քրիստինե Սարգսյան

ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ

Սույն Պայմանագիրը՝ թիվ----------, կնքվել է *2019թ.* ----------*ին*՝ _____, ի դեմս _____, և _____, ի դեմս _____**,** *մի կողմից* և ----------(*այսուհետ՝ Ծառայություններ մատուցող*) միջև մյուս կողմից**:**

Քանի որ Պատվիրատուն հրավիրել է ներկայացնել առաջարկ **«Հանրային իրազեկման քարոզարշավի նյութերի պատրաստում»** ծառայությունների իրականացման համար և ընդունել է Պայմանագրի շրջանակներում այդ ծառայությունների մատուցման համար Ծառայություններ մատուցողի առաջարկը՝ ---------- ընդհանուր արժեքով՝ ներառյալ ԱԱՀ (այսուհետ՝ Պայմանագրի գին), ուստի

Այսուհետ սույն Պայմանագիրը վկայում է հետևյալի մասին.

1. Ստորև նշվող փաստաթղթերը համարվում և ընթերցվում են, իբրև սույն Պայմանագրի անբաժանելի մասերը.
   ա/ Ծառայություններ մատուցողի Գնառաջարկը՝ ծառայությունների մատուցման պայմանները, տեխնիկական պահանջները;
   բ/ Լրացումներ (եթե կիրառելի են):

2. Հաշվի առնելով վճարումները, որոնք ստորև նշված ձևով կիրականացվեն Պատվիրատուի կողմից Ծառայություններ մատուցողին, Ծառայություններ մատուցողը Պատվիրատուի հետ կնքում է սույն Պայմանագիրը, համաձայն որի պետք է սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան իրականացնի և ավարտի Ծառայությունների մատուցումն ու վերացնի ցանկացած թերությունները:

3. Սույնով Պատվիրատուն պարտավորվում է կատարել ծառայությունների մատուցման և վերացրած թերությունների հետ կապված վճարումները Պայմանագրի գնի չափով՝ սույն Պայմանագրով սահմանված վճարման պայմանների համաձայն:

4. **Դադարեցում**

4.1 Դադարեցում պայմանների չկատարման համար

(ա) Պատվիրատուն, Ծառայություններ մատուցողին ուղարկվող՝ պարտավորությունների չկատարման վերաբերյալ գրավոր ծանուցումով, կարող է ամբողջությամբ կամ մասնակի խզել պայմանագիրը՝ պահպանելով իր

իրավունքը՝ պայմանագրի չկատարման հիմքով դիմելու որևէ այլ պաշտպանության միջոցի, եթե.

(i) Ծառայություններ մատուցողը չի կարողանում մատուցել որևէ կամ բոլոր Ծառայությունները Պայմանագրում նախանշված ժամետում կամ տրամադրված երկարաձգված ժամկետում:

(ii) Եթե Ծառայություններ մատուցողը չի կարողանում կատարել Պայմանագրի շրջանակներում նախանշված ցանկացած պարտավորություն, կամ

(iii) Եթե Ծառայություններ մատուցողը, Պատվիրատուի կարծիքով, Պայմանագրի համար մրցելիս ներգրավվել է խարդախության կամ կոռուպցիայի մեջ՝ համաձայն ստորև ներկայացվող Կետ 5-ի:

(բ) Այն դեպքում, երբ Պատվիրատուն ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնում է Պայմանագիրը, իր կողմից հարմար դիտարկվող պայմաններով և ձևով Պատվիրատուն կարող է գնել Ծառայություններ կամ համապատասխան Ծառայություններ, որոնք նման են չմատուցված կամ չտրամադրված ծառայություններին, իսկ Ծառայություններ մատուցողը պետք է պատասխանատու լինի Պատվիրատուի հանդեպ համանման Ծառայությունների և Ծառայությունների նպատակով ցանկացած լրացուցիչ ծախսերի համար: Այնուամենայնիվ, Ծառայություններ մատուցողը պետք է շարունակի Պայմանագրի Կատարումը այնքանով, որքանով այն դադարեցված չէ:

4.2 Անվճարունակության համար դադարեցում

(ա) Պատվիրատուն կարող է ցանկացած ժամանակ դադարացնել Պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով Ծառայություններ մատուցողին, եթե Ծառայություններ մատուցողը սնանկ կամ անվճարունակ է ճանաչվում: Նման դեպքում դադարեցումը կլինի առանց Ծառայություններ մատուցողին փոխհատուցման, այն դեպքում, եթե նման դադարեցումը կանխակալ կարծիք չի ստեղծի կամ ազդի հայցի ներկայացման իրավունքի կամ իրավունքի պաշտպանության միջոցի վրա կամ կստացվի Պատվիրատուի կողմից:

4.3 Դադարեցում հարմարության համար

(ա) Պատվիրատուն, Ծառայություններ մատուցողին ուղարկված ծանուցման միջոցով, կարող է դադարեցնել Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասամբ իր հարմարության համար ցանակացած ժամանակ: Դադարեցման մասին ծանուցմամբ պետք է սահմանվի, որ դադարեցումը Պատվիրատուի հարմարության համար է, Պայմանագրի շրջանակներում Ծառայություններ մատուցողի կատարողականի դադարեցման չափսը, ինչպես նաև օրը, երբ դադարեցումն ուժի մեջ է մտնում:

(բ) Ամբողջական Ծառայությունները, որոնք պատրաստեն մատուցման համար Ծառայություններ մատուցողի կողմից դադարեցման մասին ծանուցումը ստանալուց հետո 28 (քսանութ) օրվա ընթացքում, կընդունվեն Պատվիրատուի կողմից Պայմանագրի պայմաններով և գներով: Մնացած ծառայությունների համար Պատվիրատուն կարող է ընտրել.

(i) ընդունել Ծառայությունների որոշակի մաս՝ ավարտված և մատուցված սույն Պայմանագրի պայմանների ու գների համաձայն
(ii) չընդունել Ծառայությունների մնացած մասը և վճարել Ծառայությունները մատուցողին երկկողմ համաձայնեցված գումար՝ մասամբ ավարտված Ծառայությունների և Ծառայությունները մատուցողի կողմից նախապես ձեռքբերված նյութերի ու պահեստամասերի համար:

5. Խարդախություն և կոռուպցիա

Եթե Պատվիրատուն որոշում է, որ Ծառայություններ մատուցողը և/կամ վերջինիս աշխատակիցներից որևիցէ մեկը, կամ վերջինիս գործակալները կամ Ենթակապալառուները, խորհրդատուները, ծառայություն մատուցողները և/կամ վերջիններիս աշխատակիցները Պայմանագրի իրականացման համար մրցելիս ներգրավվել են կոռուպցիոն, խարդախ, գաղտնի համաձայնությամբ պայմանավորված, հարկադրական կամ խոչընդոտող միջոցառումներում (*ինչպես սահմանվում է Բանկի գերակայող կանխարգելիչ միջոցառումներում*), ապա Պատվիրատուն կարող է Ծառայություններ մատուցողին կատարված 14-օրյա ծանուցմամբ դադարեցնել Ծառայություններ մատուցողի վարձումը Պայմանագրի շրջանակներում և չեղյալ հայտարարել Պայմանագիրը, իսկ նախորդ Կետ 4-ը պետք է կիրառվի այն դեպքում, եթե նման բացառումն իրականացվել է ենթակետ 4.1-ի շրջանակներում:

6. Ստուգումներ և աուդիտ

6.1 Ծառայություններ մատուցողը պետք է իրականացնի Պատվիրատուի բոլոր ցուցումներ, որոնք չեն հակասում ծառայությունների մատուցման վայրում կիրառվող օրենսդրական դաշտին:

.....

Ծառայություններ մատուցողը պետք է թույլատրի և պետք է այնպես անի, որպեսզի վերջինիս Ենթակապալառուները և խորհրդատուները թույլատրեն Բանկին և/կամ Բանկի կողմից նշանակված անձանց ստուգել Պայմանագրի իրականացման և Գնանշման ներկայացման հետ կապված Ծառայություններ մատուցողի գրասենյակները և բոլոր հաշիվները և գրառումները Բանկի կողմից նման պահանջ լինելու դեպքում: Ծառայություններ մատուցողի և վերջինիս Ենթակապալառուների և Խորհրդատուի ուշադրությունը հրավիրվում է Կետ 5-ին՝ Պայմանագրի՝ Խարդախության և կոռուպցիայի ձևին, որը ի լրումն այլ բաների, տրամադրում է այն

գործողությունները, որոնք նպատակ ունեն սկզբունքորեն խոչընդոտելու Բանկի ստուգման և աուդիտի իրավունքների իրանացմանը և որոնք փոխարինում են արգելված միջոցառման, որը հանգեցնում է պայմանագրի դադարեցման (ինչպես նաև Բանկի գերակայող կանխարգելիչ ընթացակարգերի համաձայն՝ անհամապատասխանության որոշելուն):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ

ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

Ամսաթիվ

Ում՝ ----------(Պատվիրատուի անվանումը)

----------(Պատվիրատուի հասցեն)

Մենք առաջարկում ենք իրականացնել ---------- *(Պայմանագիր անվանումը և համարը),* համաձայն սույն Գնանաշման Հրավերին կցված պայմանագրի պայմաններին ---------- (*գումարը՝ բառերով և թվերով*) Պայմանագրի գնով՝ ներառյալ բոլոր հարկերը: Մենք առաջարկում ենք ավարտել Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցումը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետ, 8 շաբաթվա ընթացքում:

Սույն Առաջարկը և Ձեր գրավոր ընդունումը կհանդիսանա մեր միջև պարտադիր ուժ ունեցող Պայմանագիր: Մենք հասկանում ենք, որ Դուք պարտավոր չեք ընդունել ամենացածր գին ունեցող կամ Ձեր կողմից ստացված որևէ այլ Առաջարկ:

Սույնով մենք հաստատում ենք, որ սույն Առաջարկը համապատասխանում է Գնանշման Հրավերի փաստաթղթերի առաջարկի վավերության պահանջներին:

Լիազորված ստորագրություն

Ստորագրողի անունը և պաշտոնը

Ծառայություններ մատուցողի անվանումը

Հասցեն

Հեռախոսի համարը

Էլ. փոստ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ծրագրի անվանում՝ *«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային ծրագիր, կրեդիտ #5222-ԱՄ; և թիվ 014138 դրմաշնորհ*
Պատվիրատու՝ *ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ*
Փաթեթ No. CR4/B-G/SH/024-18

1. Ծառայությունների Գնացուցակ

Ծառայության անվանումը	**Քանակը /հատ/**	**Մեկ միավորի գինը** (ներառյալ ուղղակի և անուղղակի հարկեր, մաքսային վճարումներ, պարտավորություններ և այլ տեղական ծառայություններ (եթե առկա են), **ՀՀ դրամ**	**Գինը ընդհանուր (2*3) (ՀՀ դրամ)**	**Մատուցման վայրը/հասցեն**	**Մատուցման ժամկետը**
1	***2***	***3***	***4***	***5***	***6***
Հաշվետվություն ֆոկուս խմբերում իրականացված նախաթեստավորման վերաբերյալ՝ մշակված ցուցապաստառների և բուկլետների համար					***Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 3 շաբաթվա ընթացքում***
Մշակված բուկլետների տրամադրում (տպագրության համար նախատեսված ֆորմատով)					

Մշակված առաջին տարբերակի ցուցապաստառների տրամադրում (տպագրության համար նախատեսված ֆորմատով)	1			ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ 49/4, Կոմիտասի պող., Երևան 0051, ՀՀ	***Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 4 շաբաթվա ընթացքում***
Հասարակական տրանսպորտի արտաքին մակերեսներին տեղադրելու համար գովազդի տրամադրում (տպագրության համար նախատեսված ֆորմատով)					
Հաշվետվություն ֆոկուս խմբերում իրականացված նախաթեստավորման վերաբերյալ՝ նկարահանված հոլովակների և պատրաստված ռադիոգովազդի համար					***Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 6 շաբաթվա ընթացքում***
Երկրորդ տարբերակի ցուցապաստառների տրամադրում (տպագրության համար նախատեսված ֆորմատով)					***Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 8 շաբաթվա ընթացքում***
Նկարահանված հոլովակների ներկայացում					
Ռադիոգովազդի ձայնագրության ներկայացում					

<u>Նշում.</u> Միավորի գնի հաշվարկման և ծառայությունների մատուցման ընդհանուր գնի միջև տարբերության դեպքում գերակայողը միավորի գինն է:

2. **<u>ՖԻՔՍՎԱԾ ԳԻՆ.</u>** Վերը նշված գներն անփոփոխ են ու ֆիքսված և սույն Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխման ենթակա չեն:

3. Պատվիրատուին իրավունք է վերապահված վերջնական պայմանագրի պատրաստման ժամանակ մինչև 15 տոկոսի չափով ավելացնել կամ պակասեցենել ծառայությունների նախնական քանակները՝ առանց միավորի գնի, ինչպես նաև այլ պայմանների փոփոխության:

4. **<u>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ</u>** Ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի ***պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 8 (ութ) շաբաթվա*** ընթացքում ընթացքում:

5. **<u>ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u>** Չ/Կ

6. **<u>ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ</u>** Սույն Պայմանագիրը պետք է մեկնաբանվի համաձայն Պատվիրատուի երկրի օրենսդրության:

7. **<u>ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ</u>** Պատվիրատուն և Ծառայություններ մատուցողը պետք է ձեռնարկեն բոլոր ջանքերը, որպեսզի ուղղակի, ոչ պաշտոնական բանակցությունների միջոցով բարեկամաբար լուծեն իրենց միջև սույն Պայմանագրի շրջանակներում առաջացած ցանկացած տարաձանություն կամ վեճ: Պատվիրատուի և Ծառայություններ մատուցողի միջև առաջացած, չլուծված վեճի դեպքում այն ենթակա է լուծման Պատվիրատուի երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. **<u>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ</u>** Ծառայությունները մատուցողը պետք է էլեկտրոնային/թղթային հասցեով ուղարկի այդ փաստաթղթերը Պատվիրատուին.

   ա. Ծառայությունների մատուցողի հաշիվ-ապրանքագիրը՝ նշելով ծառայությունների նկարագրությունը, քանակը, միավորի արժեքը և ընդհանուր արժեքը:
   բ. Հավաստող փաստաթղթեր (օր.՝ պայմանագրեր/ հանձման-ընդունման ակտեր/ և այլն)

9. **<u>ՎՃԱՐՈՒՄ</u>** Վճարումը կատարվում է բանկային փոխանցումով՝ 100% Ծառայություններ մատուցողի և Գնորդի ներկայացուցիչների կողմից, ծառայությունների մատուցման ավարտից հետո (30) օրվա ընթացքում ընդունված ծառայության արժեքի չափով:

10. **<u>ԵՐԱՇԽԻՔ Չ/Կ;</u>**
11. **<u>ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՆՇԱԳՐՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ Չ/Կ</u>**

12. **<u>ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>** Բոլոր թերությունները պետք է վերացվեն Ծառայություններ մատուցողի կողմից Պատվիրատուի ծանուցումից հետո երեք /3/ օրվա ընթացքում՝ առանց Պատվիրատուի կողմից լրացուցիչ վճարման:
13. **<u>ՖՈՐՍ ՄԱԺՈՐ</u>** Ծառայություններ մատուցողի նկատմամբ տույժեր չեն կիրառվի և պայմանագիրը չի դադարեցվի այն դեպքում, եթե ծառայությունների մատուցման ուշացումը կամ պարտականությունների կատարման հետ կապված ձախողումը արդյունք է հանդիսանում ֆորսմաժորային իրադարձության: Այս կետի շրջանակում «Ֆորս Մաժոր» նշանակում է. Ծառայություններ մատուցողի հսկողությունից դուրս գտնվող իրադարձություն, որը չի ներառում Ծառայություններ մատուցողի սխալը կամ անփութությունը, և որը կանխատեսելի չէ: Այդպիսի իրադարձությունները կարող են ընդգրել, սակայն չսահմանափակվել Պատվիրատուի ինքնիրավ գործողություններով, պատերազմներով կամ հեղափոխություններով, հրդեհներով, հեղեղումներով, համաճարակներով, կարանտինային սահմանափակումներով և էմբարգոներով: «Ֆորս Մաժոր»-ի դեպքում, Ծառայություններ մատուցողը պետք է անհապաղ գրավոր ծանուցի Պատվիրատուին նման իրավիճակի և դրա պատճառների մասին: Եթե Պատվիրատուից այլ գրավոր հրահանգ չի ստացվում, Ծառայություններ մատուցողը պետք է շարունակի սույն Պայմանագրի շրջանակներում իր պարտականությունների կատարումը հնարավորության սահմաններում, և պետք է աշխատի գտնել «Ֆորս Մաժոր» իրադարձությամբ չկանխարգելվող՝ աշխատանքի համար բոլոր իրագործելի այլընտրանքային տարբերակները:

14. **<u>ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ</u>**
    (i) Ընդհանուր նկարագրություն,
    (ii) Առանձնահատուկ մանրամասներ ստանդարտներ,
    (iii) Կատարողականի չափորոշիչներ:

Ծառայություններ մատուցողը հաստատում է համապատասխանությունը վերոնշյալ մասնագրերի (Շեղումների դեպքում Ծառայություններ մատուցողը պետք է նշի դրանք ստորև):

Ծառայություններ մատուցողի անունը

Լիազորված անձի ստորագրությունը

Ամսաթիվը

Աշխատանքների ընդհանուր նկարագիր

Զարկերակային գերճնշման, շաքարային դիաբետի և արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերմանն ու կանխարգելմանն ուղղված սքրինինգային հետազոտությունների վերաբերյալ հանրային իրազեկման նյութերի պատրաստում

1. Նպատակ

Սույն առաջադրանքի նպատակն է տեխնիկական աջակցություն ցուցաբերել պատվիրատուին՝ ՀՀ ԱՆ «Առողջապահական Ծրագրերի Իրականացման Գրասենյակին» ՊՀ-ին (այսուհետ ԱԾԻԳ)

ա. 2019-ից 2020թթ. ընթացքում «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրով նախատեսված սքրինինգային հետազոտությունների երկրորդ փուլի հանրային իրազեկման քարոզարշավի առավել արդյունավետ կազմակերպմանը: Սքրինիգային հետազոտություններն ուղղված են արյան գերճնշման, շաքարային դիաբետի և արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելմանը:

բ. Ապահովել բնակչության առավելագույն իրազեկվածությունը վերոնշյալ սքրինիգային ծրագրերի վերաբերյալ՝ հաղորդակցության տարբեր միջոցների՝ մասնավորապես զանգվածային տեղեկատվության տարբեր հարթակների միջոցներով: Նախատեսվում է հանրային իրազեկման քարոզարշավի երկրորդ փուլում ընդգրկել բանկային համակարգը, սոցիալական ծառայության գրասենյակներն, ավագ դպրոցները, բջջային օպերատորներին, Երևանի քաղաքապետարանի հնարավորություններն, ինչպես նաև սոցիալական գովազդի հեռարձակում հեռուստատեսությամբ և ռադիոյով:

2. Առաջադրանքի շրջանակը

Սույն առաջադրանքի շրջանակներում նախատեսվում է.

2.1 Գովազդային տեսահոլովակների նկարահանում

- Յուրաքանչյուր հիվանդության (զարկերակային գերճնշում, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) համար մեկական հոլովակ:
- Հոլովակներից յուրաքանչյուրի տևողությունն առնվազն 30 և առավելագույնը 40 վայրկյան:
- Հոլովակներում պետք է օգտագործվեն պաշտոնական վիճակագրական տվյալներ՝ հավաստի տեղեկատվություն:
- Շեշտադրված լինի հետազոտությունների անվճար լինելու փաստը և հասանելիության գործոնը:
- Հոլովակներում կարող են օգտագործվել բժիշկների և/կամ բնակչության կողմից ուղերձներ:

• Հոլովակների սցենարները ներկայացվում են ստորև (հոլովակների նկարահանման ընթացքում սցենարի որևէ փոփոխություն պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ):

• Հոլովակների ֆորմատը առնվազն Full HD:

2.1.1 Զարկերակային գերճնշման տեսահոլովակ

Հոլովակի հերոսուհին, ով թիրախային խմբի տարիքի անձ է, վարում է իր առօրյա գործերը, օր.՝ արթնանում է, նախաճաշում, երեխաներին ուղեկցում դպրոց, գնում է աշխատանքի, մեքենա է վարում: Զուգորդաբար ցուցադրվում է կարմիր փուչիկ, որը հետզհետե փչվում է և երբ ճնշումը նրանում հասնում է կրիտիկական մակարդակի, պայթում է: Հոլովակում տեղի ունեցող գործողությունը ընթանում է հետզհետե սաստկացող երաժշտությամբ, որն ավարտվում է փուչիկի պայթյունի ձայնով: Հոլովակի նպատակն է ցույց տալ, որ զարկերակային գերճնշումը կարող է ընթանալ անախտանիշ և սպառնալ յուրաքանչյուրի կյանքին և առողջությանը: Այս ամենից կարելի է խուսափել անցնելով անվճար սքրինինգային հետազոտություն:

2.1.2 Շաքարային դիաբետի տեսահոլովակ

Հոլովակում բժիշկը և քաղաքացիները, ովքեր պատկանում են թիրախային խմբին, կոչ են անում բնակչությանն անցնել անվճար սքրինինգային հետազոտություն, ինչը կկանխարգելի հիվանդության զարգացումն և հետագա բարդությունները:

2.1.3 Արգանդի վզիկի քաղցկեղի տեսահոլովակ

Հոլովակի հերոսուհին, ով թիրախային խմբի տարիքի անձ է, պատմում է իր ախտանշանների և անցած բուժման ճանապարհի մասին, երբ նրա մոտ ախտորոշվել է արգանդի վզիկի քաղցկեղ: Կնոջ արտաքին տեսքից երևում է, որ նա ծանր հակաքաղցկեղային բուժում է ստացել: Պատմելու հետ զուգահեռ նրա արտաքին տեսքը փոխվում է և աստիճանաբար վերադառնում է մինչև հիվանդության հայտնաբերման արտաքինը: Այս ամենը ցուցադրում է, որ անդառնալի կորուստներից կարելի է խուսափել անցնելով անվճար կանխարգելիչ սքրինինգային հետազոտություն:

2.2 Ցուցապաստառների մշակում

• Յուրաքանչյուր հիվանդության (զարկերակային գերճնշում, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) համար երկուական ցուցապաստառի մշակում:

1. Առաջին տարբերակի ցուցապաստառները կարող են ներառել տեղեկատվություն ա. Ռիսկի գործոնների, բ. Սքրինիգային կանխարգելիչ հետազոտության շնորհիվ անցանկալի հետևանքներից խուսափելու հնարավորության մասին, և գ. Առողջ ապրելակերպ վարելու շնորհիվ հիվանդության կանխարգելման հնարավորության մասին, կամ նշված կետերից որևէ մեկը:

2. Երկրորդ տարբերակի ցուցապաստառները պետք է արտացոլեն վերոնշյալ հոլովակները:

3. Պատվիրատուին մշակված ֆայլերի տրամադրում ինչպես ցուցապաստառների, այնպես էլ բիլբորդների և հասարակական տրանսպորտի արտաքին մակերեսներին տեղադրելու նպատակով՝ տպագրության համար:

2.3 Բուկլետներ

- Յուրաքանչյուր հիվանդության (զարկերակային գերճնշում, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) համար առանձին բուկլետի մշակում:
- Բուկլետում պետք է տեղադրել հետևյալ տեղեկատվություն հետևյալ բովանդակությամբ.

ա. Հիվանդություններից յուրաքանչյուրի ախտանշանները,
բ. Ռիսկի գործոնները,
գ. Անվճար սքրինինգային հետազոտության միջոցով այդ հիվանդություններից խուսափելու հնարավորությունը:

- Բուլկետների ֆորմատը պետք է նախապես համաձայնեցվի Պատվիրատուի հետ:

2.4 Ռադիոգովազդ

Գովազդի բովանդակությունը կկազմվի պաշտոնական վիճակագրական տվյալների և հիվանդությունների ու նրանց բարդությունները կանխելու հնարավորության վրա: Գովազդի տևողությունն առնվազն 30 և առավելագույնը 40 վայրկյան: Վերոնշյալ հիվանդություններից յուրաքանչյուրի համար կձայնագրվի առանձին և յուրաքանչյուր գովազդի վերջում կնշվի սքրինինգային հետազոտության ծրագրի մեջ ընդգրկված հիվանդությունների ամբողջական ցանկը, հետազոտությունների անվճար լինելը և հասանելիությունը:

2.5

Առաջադրանքի շրջանակներում պատրաստվող հանրային իրազեկման նյութերը պետք է ընդգրկեն/արտացոլեն «Հիվանդությունների կանխարգելում և իրազեկում ծրագրի հանրային քարոզարշավի գնահատման հետազոտության» հիմնական առաջարկները, որոնք ներկայացված են Հավելված 1-ում:

2.6

Առաջադրանքի շրջանակներում պատրաստվող բոլոր հանրային իրազեկման նյութերը՝ մինչ Պատվիրատուին ներկայացնելը, պետք է անցնեն նախաթեստավորում ֆոկուս խմբային քննարկումներում: Ֆոկուս խմբային քննարկումները պետք է անցկացվեն ըստ հետևյալ չափանիշների

Ֆոկուս խումբ	Հանրային իրազեկման նյութեր	Սեռ	Տարիք	Մասնակիցների քանակ
1	Ցուցապաստառներ և	Արական	30-45	6-8

2	բուկլետների թեստավորում	Իգական	45-68	6-8
3	Գովազադային հոլովակներ և ռադիոգովազդ թեստավորում	Իգական	30-45	6-8
4		Արական	45-68	6-8

Ֆոկոս խմբային քննարկումների մասնակիցները պետք է անցած չլինեն սքրինինգային հետազոտություններ:
Առաջադրանքի շրջանակներում պատրաստվող բոլոր հանրային իրազեկման նյութերի նախաթեստավորման ֆոկուս խմբային քննարկումների ուղեցույցերը/հարցաշարերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նախաթեստավորման արդյունքում ստացված առաջարկները քննարկել Պատվիրատուի հետ և իրականացնել համապատասխան փոփոխություններ հանրային իրազեկման նյութերում:

3. Հաշվետվողականություն
Կազմակերպությունը հաշվետու է ԱԾԻԳ-ին: Առաջադրանքի շրջանակներում պատրաստվող հանրային իրազեկման նյութերի լեզուն հայերենն է: Պատրաստված բոլոր նյութերի վերջում պետք է նշված լինի «Պատրաստված է առողջապահության նախարարության պատվերով» բառերը:
Կազմակերպության կողմից մշակված ցանկացած նյութի բովանդակությունը, ձևաչափը պետք է նախապես համաձայնեցվի ՀՀ ԱՆ-ի և ԱԾԻԳ-ի հետ մինչև վերջնական ներկայացումը:

Սույն առաջադրանքի տևողությունն 8 (ութ) շաբաթ է:

Հավելված 1

«Հիվանդությունների կանխարգելում և իրազեկում ծրագրի հանրային քարոզարշավի գնահատման հետազոտության» հիմնական առաջարկները

Գովազդային հոլովակներ և պաստառներ կազմելիս ուշադրություն դարձնել հետևյալ ընդհանուր դրույթներին:

- Հոլովակներում և պաստառներում **կիրառել բժշկական/առողջապահական ատրիբուտիկա**(, և այլն)
- Օգտագործել մասնակիցների կողմից **առողջապահության գույներ** համարվող՝ սպիտակը, կապույտը, առավել պակաս կարմիրը, կանաչը:
- Օգտագործել հստակ **տառատեսակներ և խոշոր font size**.
- **Բացառել հայտնի մարդկանց (celebrities) օգտագործումը** գովազդային հոլովակներում և պաստառներում: Հեղինակությունների ներգրավումը հիշեցնում է մշակութային միջոցառումների (թատրոն, համերգ) անոնս, չի առաջացնում մասնակցության խթան:
- Օգտագործել **հեղինակավոր բժիշկների կամ պարզապես բժիշկների կերպար:** Բժշկի նախընտրելի պրոֆիլը հետևյալն է.

✓ 45-55տարեկան

✓ Տղամարդ/կին: Կանանց համար վստահելի են տղամարդ բժիշկները, սակայն ՊԱՊ թեստի համար նախընտրելի են համարում կին-բժշկի կերպարը: Տղամարդկանց սեգմենտի համար կարող է լինել նաև նույն տարիքի կին:

✓ բժշկական խալաթով, ակնոցներով:

- Գովազդային նյութերը պետք է ընդգրկեն հետևյալ տեղեկատվությունը.

✓ «Անվճար» հետազոտություն

✓ Հետազոտությունները կազմակերպող կազմակերպության անվանում ՀՀ Առողջապահության նախարարություն

✓ Հետազոտության վայր

✓ Հիվանդություններ

✓ «Թեժ գծի» հեռախոսահամար

- Գովազդային հոլովակները կազմել էմոցիոնալ, ներառել երեխաների, դեռահասների կոչ մայրերին, հայրերին (ծնողներին) իրենց կյանքի պահպանման վերաբերյալ:
- Գովազդային հոլովակներում օգտագործել «երկար կյանք», «ապրել երեխաների համար», «առողջ ապրել» և այլ նմանատիպ արտահայտություններ: Օրինակ՝

«Սիրելի կանայք, սիրեք Ձեզ, ապրեք երկար և կանխարգելեք հիվանդությունները, Դուք պետք եք Ձեր ընտանիքներին»:

«Մամ դու ինձ պետք ես»:

- Գովազդային հոլովակները կազմել **կարճ, հստակ** մեսիջով, ազդեցիկ ձայնով: